

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| | |
|-----------|--|
| Թեմա՝ | Աշխարհագրություն առարկայի կարևորությունը |
| Առարկա՝ | Աշխարհագրություն |
| Ուսուցիչ՝ | Յ. Լեփսիուսի անվան թիվ 88 հիմնական դպրոց Փիլոյան Նելլի Հրանտի |

Ներածություն

Աշխարհագրությունը Երկրի մասին հին և հետաքրքրաշարժ գիտություններից մեկն է: Այն միավորում է բազմաթիվ ոլորտների իմացությունը՝ օգնելով գիտնականներին և հետազատողներին ավելի լավ հասկանալ այս զարմանալի մոլորակը:

Աշխարհագրություն կոչվել է «բոլոր գիտությունների մայր»՝ մարդկանց տալով շատ «հնչու՛»-ների պատասխաններ: Աշխարհագրական գիտելիքները օգնում են մարդկանց տեղեկատվությամբ: Մարդը վաղ տարիքց սկսած տեղեկություններ է հավաքում իր ապրելավայրի, հարևան երկրների, ողջ աշխարհի բնության, բնակչության, տնտեսության առանձնահատկությունների մասին: Աշխարհագրությունը օգնում է ժամանակակից կիրթ մարդուն հասկանալ ճիշտ պատկերացնել ամաբողջական երկիրը, իր հայրենիքը, հայրենի եզերքը: Հետևապես մարդը պետք է կարողանա տեսնել և կանխատեսել երկրի մակերևույթի վրա տեղի ունեցող երևույթների օրինաչափությունները ու փոխկապակցվածությունը, հասկանալ, որ մի համակարգի փոփոխությունը իր հետ բերում է բնության ու հասարակության համակարգերի փոփոխության, հստակ գիտակցել, որ մարդկության ու բնության ճակատագրերը միասնական են ու անքակտելի: Այս հետազոտական աշխատանքի նպատակն է վեր հանել աշխարհագրական կանխատեսումների դերը և դրանց կարևորությունը մարդկանց համար:

Աշխատանքը բաղկացած է հետևյալ բաժիններից.

1. Հետազոտական համատեքստ . Աշխարհագրության էությունը
2. Գործնական համատեքստ . Աշխարհագրական գիտության արդիականությունը
3. Հետազոտության ընթացքը. Աշխարհագրական կանխատեսումներ,
4. Տվյալների մշակում և վերլուծություն
5. Եզրակացություն
6. Գրականության ցանկ

Հետազոտական համատեքստ Աշխարհագրության էությունը

*Բնության ուժն անսահման է...
Ցիցերոն*

Աշխարհագրությունը հանրակրթական առարկա է, որը ուսումնասիրվում է միջնակարգ դպրոցում: Այն ներառում է երեք բաժին. ընդհանուր աշխարհագրություն, ֆիզիկական աշխարհագրություն և տնտեսական աշխարհագրություն: Այս բաժինները օգնում են հասկանալ աշխարհը՝ իր գործընթացներով: Ավելին, դպրոցական շատ առարկաներ հիմնված են աշխարհագրական գիտելիքների հիման վրա: Այս առարկան ուսումնասիրելիս, սովորողները տիրապետում են աշխարհագրական օբյեկտների, երևույթների մասին հասկացություններին, ձեռք են բերում քարտեզագրական գիտելիքներ, ինչպես նաև, կրթական աշխատանքի ընդհանրացված մեթոդներ: Կարևոր է նշել, որ դասընթացի ուսումնասիրման ընթացքում աշակերտների մոտ սկսում է ձևավորվել աշխարհագրական մշակույթը և աշխարհագրական լեզվի ուսուցումը: Դպրոցականները ուսումնասիրելով առարկան, տիրապետում են աշխարհագրական գաղափարներին, հասկացություններին, տեղեկատվության աղբյուրներին, պատճառահետևանքային կապերին, քարտեզի հետ կապված աշխարհագրական հմտություններին: Աշխարհագրական գիտելիքները սովորողները կարող են օգտագործել առօրյա կյանքում: Գիտելիքների յուրացման արդյունքում կարևոր է գնահատել շրջակա միջավայրը, դրա պահպանումը և ռացիոնալ օգտագործումը: Աշխարհագրական կրթությունը մեծացնում է սերը բնակավայրի, տարածաշրջանի, երկրի նկատմամբ: Կարևորում են աշխարհագրության դասընթացի կրթադաստիարակչական դերը: Սովորողը ճանաչելով բնական ու հասարակական տարրերն ու երևույթները, հասկանում և գնահատում է սեփական հայրենիքի տեղն ու դերը աշխարհում: Խորացնելով քարտեզագրական գիտելիքները, սովորողը կարևորում է ազգային- պետական մտածողությունը, դառնում է ավելի ազգասեր և հայրենասեր:

Գործնական համատեքստ


Աշխարհագրական գիտության արդիականությունը

Արդի աշխարհագրությունը գիտությունների մի բարդ համակարգ է՝ բաղկացած բազմաթիվ ճյուղերից: Վաղուց արդեն աշխարհագրությունը չի սահմանափակվում բնական և հասարակական երևույթների մասին փաստեր հավաքելով, նկարագրելով ու գնահատելով: Կյանքը նոր, շատ ավելի բարդ խնդիրներ է դնում, որոնք կապված են երկրագնդի վրա ընթացող հասարակական նոր երևույթների, մարդ-բնություն հարաբերությունների նոր մակարդակի և հաստատված նոր աշխարհակարգի հետ: Ավելի ու ավելի ծավալվող համամոլորակային երևույթների, խորացող համամարդկային հիմնախնդիրների, ինչպես նաև միջազգային հարաբերությունների թելադրանքով փոխվում է հասարակական պատվերը: Աշխարհագրությունը առաջավոր դիրք է գրավում գիտությունների համակարգում: Կրկին ընկալվում է որպես <<պետականության ատրիբուտ>> :

Մարդկությունն այսօր կանգնած է անընդհատ ահագնացող հիմնախնդիրների դեմ հանդիման, որոնք շոշափում են մարդկության ապագան և դրանց թելադրանքով աշխարհագրությանը ներկայացվում է նոր սոցիալական պատվեր, որը կատարելու համար նա պետք է նոր, տեսական վերաճնունդ ապրեր: Այդ վերաճնունդը սկսվել է անցյալ դարի կեսերից և այսօր արդեն վերաճնված աշխարհագրությունը հանդես է գալիս նոր բովանդակությամբ և սոցիալական առաջնային կարևորություն ունեցող հիմնախնդիրների գիտատեսական և գործնական լուծման մեծ ներուժով: Մինչև XIX դարը աշխարհագրության վերելքը և նրա բարձր սոցիալական հեղինակությունը պայմանավորված էր նոր աշխարհագրական հայտնագործություններով, երկրագնդի բնակելի մակերեսի, ֆիզիկական դաշտի ընդարձակմամբ: Այդ ռեսուրսն արդեն սպառված է, այժմ տիրապետող է հակառակ գործընթացը, որը կարելի է բնութագրել որպես երկրագնդի մակերեսի <<փոքրացում>> :

Երկրաչափական պրոգրեսիայով աճում է աշխարհի ազգաբնակչության թիվը , հետևապես և խտությունը: Եթե XIX դարի սկզբին մեկ բնակչին միջինը հասնում էր ավելի քան 150 հա, ապա այժմ ընդամենը 25 հա-ից էլ պակաս ցամաքային տարածք: Բնակչության աճի ներկայիս տեմպերը պահպանվելու դեպքում 2-3 տասնյակ հետո այդ թիվը կհսով չափ կկրճատվի: Տեղի է ունենում երկրագնդի տարածքային ռեսուրսների հարաբերական կրճատում:

Աշխարհի բնակչության թվաքանակի աճը



Երկրագունդը գերբնակեցված է, այս եզրակացության է հանգել անգլիացի տնտեսագետ Թոմաս Մալթուսը դեռևս XIX դարի սկզբին, երբ երկրագնդի բնակչության թիվն ընդամենը 1 մլրդ է: Այսօր աշխարհի բնակչությունը հասել է 7,5 մլրդ է:

Բնակչության արագ աճին զուգահեռ աճում է նաև նյութական արտադրության ծավալը: Մեծանում է խզումը մարդկանց պահանջմունքի և մոլորակի հումքային ռեսուրսների հնարավորությունների միջև, մեծանում է դրանց սպառման վտանգը : Նոր թափ է առնում բնական լանդշաֆտների դեգրադացիան: , մարդու բնական միջավայրի որակի վատթարացումը:

Համամոլորակային մասշտաբով տեղի է ունենում մարդու ապրելատեղի և արտադրական գործունեության տարածական բազիսի ոչ միայն քանակական կրճատում, այլև նրա բնական միջավայրի որակական հատկանիշների վատթարացում և անդառնալի կորուստ: Մարդկության ընդհանուր տան՝ Երկիր մոլորակի համար ստեղծվել է բոլորովին այլ, մինչ այդ անծանոթ իրավիճակ:

Աշխարհագրական բնույթի տագնապալի երևույթներ են տեղի ունենում հասարակական կյանքում, նրա տարածքային կազմակերպման ոլորտում: Մեծանում են աշխարհի պետությունների ու տարածաշրջանների զարգացման մակարդակների տարբերությունները, խզումը աղքատների ու հարուստների միջև, սրվում են ԱրևմուտքԱրևելք, Հյուսիս-Հարավ հակասությունները: Վերջին 100 տարում աշխարհի անկախ պետությունների թիվը գրեթե քառապատկվել է՝ 55-ից հասնելով շուրջ 231-ի : Տասնյակներով են հաշվվում այն տարածքները, որոնց ժողովուրդները պայքարում են քաղաքական անկախության համար: Գնալով աճում է միջէթնիկական հակամարտությունների ու տարածքային վեճերի թիվը: Այդ ամենը վկայությունն է այն բանի, որ աշխարհի դիֆերենցումը, տարաբաժանումը շարունակվում է: Այս ամենի հետ կապված փոխվել է աշխարհագրական թաղանթը և նրա բոլոր բաղադրիչները, այսինքն այն ամենը, ինչն աշխարհագրության համար ծառայում է որպես ուսումնասիրության օբյեկտ, սկսվեց ընկալվել որպես չափազանց բարդ համակարգ:

Աշխարհագրությունը ավելի շատ փորձում էր պատասխանել <<ի՞նչ>>, <<որտե՞ղ>>, <<ինչքա՞ն>>, <<ինչպե՞ս>> հարցերին, որոնք այսօր է՛լ բնորոշ են հիմնարար գիտություններին: Աշխարհագրական օբյեկտը դիտարկվում է որպես համակարգ,

գիտական հետազոտությունը կողմնորոշում է դեպի օբյեկտի ամբողջականությունը դեպի նրա ինքնակազմակերպումը և ինքնազարգացումն ապահովող ներքին մեխանիզմների, փոխադարձ կապերի ու ազդեցությունների բացահայտումը, հետազոտվող երևույթի զարգացման հետագծի որոշումը, այսինքն գիտական կանխատեսումը, որը գիտության ամեն մի ճյուղի հասունության գլխավոր չափանիշն է: Ժամանակակից աշխարհում կան բազում խնդիրներ, որոնց լուծման հաջողությունը կախված է մարդկանց գլոբալ մտածողությունից: Աշխարհագրությունը օգնում է մարդկանց տիրապետելով որոշակի գիտելիքների և հմտութունների կարողանալ ճիշտ գնահատել բնական միջավայրը, կանխատեսել մարդկային գործունեության ազդեցությունը բնության վրա:

Աշխարհագրությունը գիտության միջառարկայական ճյուղ է, հատակապես այն կապված է հարազատ բնագիտական գիտությունների հետ: Կարծես աշխարհագրությունը գտնվում է արևածաղկի կենտրոնում, նրա ամեն մի թերթիկն իրենից ներկայացնում է հարակից բնական կամ հասարակական գիտություն, ամեն թերթիկի հիմքը գտնվում է կենտրոնական մասի մեջ, որտեղ գիտությունների հետաքրքրությունները խաչաձևվում են: Աշխարհագրությունը ամբողջովին նպատակահարմար է դիտարկել որպես գիտելիքների ոլորտ, որը ծածկվում է այլ շատ գիտություններով և ուսումնասիրում երևույթները տարածական, ռեգիոնալ և էկոլոգիական առումներով: Աշխարհագրությունն արվեստ է, քանզի ստեղծում է դժվար կրկնվող նկարագրություններ, միաժամանակ և՛ գիտություն է, օգտագործում է գիտական հիմնավորումներ կանխատեսելու համար: Աշխարհագրությունն օգտագործում է մեթոդներ և տեսություններ, որոնք մշակվել են հարակից բնագավառներում: Դրա հետ մեկտեղ, աշխարհագրությունն իր ավանդն է ներդնում հարակից գիտություններում՝ առաջարկելով գործընթացների և երևույթների բացատրությունը տարածական վերլուծության և մոդելների հիմքի վրա:

Մարդը, ուսումնասիրելով իր հայրենի մոլորակը, իր համար բացում է գիտելիքների նոր հորիզոններ: Երկրի ներսի խորքերը հորատված հորերը բացել են ստորգետնյա պահեստների միայն մի փոքր մասը: Խորջրյա մեքենաներն իջնում են ծովերի և


օվկիանոսների հատակը՝ ուսումնասիրելով օվկիանոսի հատակը և եզակի ստորջրյա աշխարհը: Սառույցը գիտնականների աչքից թաքցնում է յուրահատուկ լճեր. Գիտնականներն ամեն տարի անթափանց անտառներում հայտնաբերում են կենդանիների և բույսերի նոր տեսակներ: Ամբողջ աշխարհի աշխարհագրագետները միավորում են իրենց հետազոտությունները՝ կլիմայի տաքացման և շրջակա միջավայրի աղտոտման սպառնալիքի պատճառով: Ժամանակակից աշխարհագրության հիմնական խնդիրներն են իմանալ, պահպանել և մեծացնել մեր մոլորակի հարստությունը՝ դրանք ապագա սերունդներին փոխանցելու համար: Կարելի է ամփոփել, որ գործածական է դարձել հետևյալ միտքը. «մարդկությունը ֆիզիկայի դարից մտել է կենսաբանության դար»>: Նախապատրաստվում է հաջորդ քայլը՝ հասունանում է աշխարհագրության դարը:

Հետազոտության ընթացքը

Աշխարհագրական կանխատեսումներ

*Ըմբռնել, որպեսզի կանխատեսել, կանխատեսել,
Որպեսզի տիրանալ. ահա կանխատեսագիտության
(պրոգնոստիկայի) հիմնական կարգախոսը:*

Աշխարհագրական կանխատեսումը աշխարհագրական գիտության տեսական մակարդակի բարձրագույն աստիճանն է: Նրա միջոցով աշխարհագրությունը ձեռք է բերել կիրառական, կառուցողական նշանակություն: Աշխարհագրական կանխատեսումը ծառայում է հասարակության, հասարակական կյանքի, նրա առանձին ոլորտների տարածքային կազմակերպման ու կառավարման պրակտիկային: Հասարակական կյանքը համընկնում է մարդուլրտի հետ, որը Երկիր մոլորակի աշխարհագրական թաղանթի 5 ոլորտներից մեկն է: Մարդուլրտը լինելով նույն թաղանթի բնածին ոլորտների՝ քարուլրտի, մթնոլորտի, ջրուլրտի, կենսոլրտի փոխազդեցության արդյունք, ազդվելով դրանցից, ինքն է հակադարձ ազդեցություն ունենում դրանց վրա և փոխում աշխարհագրական թաղանթի կառուցվածքը և զարգացման ուղղվածությունը:



Աշխարհագրության գիտության առջև դրված են նոր մարտահրավերներ, որոնք աչքի են ընկնում ընդգծված խմբավորումներով և առանձնահատուկ բարդությամբ:

Դրանցից էլ բխում են աշխարհագրական կանխատեսումները, որոնք բաժանվում են երկու հիմնական խմբի: Առաջին խումբը միավորում է այսպես կոչված մասնավոր կամ ճյուղային կանխատեսումները, որոնք զբաղվում են աշխարհագրական թաղանթի աբիոգեն ոլորտների (

քարուլրտ, մթնոլորտ, ջրուլրտ) և դրանց բաղադրիչների կանխատեսմամբ: Երկրորդ խումբը միավորում է կենսոլրտի ու մարդուլրտի և դրանց, այսինքն բիոգեն ու անթրոպոգեն բաղադրիչների, տարրերի կանխատեսումներով զբաղվող գիտական ենթաճյուղերն ու ուղղությունները:

Բնօգտագործման աճող տեմպերի և բնության վրա մարդու ներգործության անընդհատ հզորացման պայմաններում ակնհայտ է դարձել բնական ռեսուրսների սպառման և բնական

միջավայրի դեգրադացիայի հարաճուն վտանգը: Գիտնականները կանխատեսում են , եթե մարդ-բնություն հարաբերության բովանդակությունն էականորեն փոփոխության չենթարկվի, ապա 100-150 տարի անց Երկիր մոլորակն այլևս պիտանի չի լինի մարդկանց բնակության համար: Երկիր մոլորակը, որը մարդկության ընդհանուր տունն է, փրկելու համար օգնության են գալիս աշխարհագրական կանխատեսումները:


Կանխատեսման ներկայումս լայն տարածում ունեցող տեսակներն են՝

- Ժողովրդաաշխարհագրական
- Կլիմայական
- Զրաբանական
- Լանդշաֆտային
- Էկոլոգիական
- Տնտեսաշխարհագրական
- Քաղաքաաշխարհագրական

Աշխարհի բնակչության կանխատեսում

Երկրի բնակչությունն XXI դարի կեսին կհասնի իր գագաթնակետին՝ 9.73 միլիարդ մարդու, ապա կսկսվի անկման կայուն ընթացքը, այնպես որ 2100 թվականին այդ ցուցանիշը 8.79 միլիարդ կկազմի: Երկրագնդի աշխարհի բնակչության թվի գագաթնակետը կլինի 2064 թվականին, երբ մոլորակի վրա մոտ 9.73 միլիարդ մարդ կլինի: Ապա կսկսվի աստիճանական անկումը, որը մշտական բնույթ կկրի: Աշխարհի բնակչության կտրուկ աճը կհանգեցնի «խոշոր պայթյունի», ինչի հետևանքով կիջնի ոչ միայն կյանքի կենսամակարդակը, այլև երկրագնդի վրա կվտանգվի առողջ կյանքը: Ուստի՝ բնակչության աճը սկսվեց դիտարկվել որպես համաշխարհային սպառնալիք: Լայնածավալ ժողովրդագրական փոփոխությունների հիմնական պատճառները կլինեն կրթության տարածումը, հատկապես՝ կանանց շրջանում, եւ ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցների ավելի լայն օգտագործումն Աֆրիկայում, Մերձավոր Արեւելքում եւ ասիական որոշ

երկրներում: Հենց դրանք են դեռ մնում ժողովրդագրական աճի առաջատարները: Արդյունքում, ծնելիության միջին մակարդակը կնվազի մինչև 1.7 երեխա յուրաքանչյուր կնոջ հաշվով, ինչը բավարար չէ նույնիսկ ծնողների մահից հետո նրանց «փոխարինելու» համար: Սակայն որոշ երկրներում, կրկին՝ առաջին հերթին Աֆրիկայում, Միջին Արևելքում և Ասիայում, ծնելիության մակարդակը 2.0 ցուցանիշից բարձր կմնա:



Միեւնույն ժամանակ, կավելանա կյանքի միջին տեւողությունը, որը մինչև 2100 թվականը կգերազանցի 74 տարին գրեթե ամբողջ աշխարհում: Հետեւանք կդառնա բնակչության ծերացումը և աշխատունակ մարդկանց մասնաբաժնի նվազումը: Մինչև 2100 թվականը 65 տարեկանից բարձր մարդկանց թիվը 2.37 միլիարդ մարդ կկազմի, իսկ 20 տարեկանից ցածրներինը՝ 1.7 միլիարդ մարդ: Չինաստանի բնակչությունը մինչև դարի կեսը կհասնի մոտ 1.5 միլիարդ մարդու, բայց հետո կնվազի այս գագաթնակետային մակարդակի մոտ 48.9 տոկոսով: Հնդկաստանի բնակչությունը նույնպես կհասնի 1.6 միլիարդ մարդու, այնուհետև կնվազի 38 տոկոսով: Գագաթնակետային մակարդակից մինչև 50 տոկոսով կրճատում կլինի նաև Իտալիայում, Իսպանիայում, Ճապոնիայում և Թաիլանդում Վերոնշյալ թվերը վերաբերում են բազային կանխատեսմանը: Ընդ որում, ամենալավատեսականը ենթադրում է, որ մինչև 2100 թվականը Երկրի վրա ապրելու է 13.6 միլիարդ մարդ (ինչը 2.6 միլիարդով ավել է, քան ՄԱԿ-ի կանխատեսումը եւ գրեթե կրկնակի ավել է, քան հիմա), իսկ

բացասականի համաձայն բնակչությունը կնվազի մինչև 6,3 միլիարդ մարդ, այսինքն՝ նույնիսկ ավելի քիչ կլինի, քան հիմա:

Կլիմայական փոփոխություններ

Գլոբալ տաքացման թեման քննարկվում է նախորդ դարի կեսերից: Եվ տարեցտարի (բնական պաշարների շահագործման աճին զուգընթաց) բնապահպանների կանխատեսումներն ավելի հոռետեսական են դառնում: Ըստ գիտնականների, մարդկությունը գրեթե սպառել է մոլորակի աղտոտման իր «լիմիտը», և այժմ, արդեն գրեթե կես դար, անհրաժեշտ է շտապ միջոցներ ձեռնարկել կարգավորելու համար աղտոտող նյութերի արտանետումները մթնոլորտ, որոնց պատճառով մոլորակում անդառնալի գործընթացներ են տեղի ունենում: Բնական պաշարների անխնա շահագործումն անվերջանալի բեռ է մոլորակի համար: Եվ, եթե ամենամոտ ժամանակներս պետությունները չսկսեն կյանքի կոչել ընդունած միջազգային բնապահպանական համաձայնագրերը, ապա մինչև 2100 թավականը մոլորակի ջերմաստիճանը կարող է բարձրանալ 3.7-4.8 °C-ով:

Բնապահպանները մատնանշում են հետևյալ փոփոխությունները, եթե ջերմաստիճանի բարձրացումը շարունակվի այս տեմպերով:

Բնական աղետներ. Կտեղաշարժվեն կլիմայական գոտիները: Եղանակի փոփոխություններն ավելի կտրուկ կդառնան՝ սաստիկ սառնամանիքները կփոխարինվեն անսպասելի ջերմությամբ ձմռանը, և անոմալ շոգ օրերով ամռանը: Ավելի հաճախակի և ուժգին կդառնան երաշտներն ու ջրհեղեղները:

Կյանքի համար ոչ պիտանի տարածքներ

Խոնավության բարձրացման և բարձր միջին ջերմաստիճանի պատճառով որոշ երկրներ մինչև 2100 թ. ոչ պիտանի կդառնան կյանքի համար: Ըստ ԱՄՆ գիտնականների հետազոտության, ռիսկի խմբում են հայտնվում Քաթարը, Սաուդյան Արաբիան, Բահրեյնը, ՄԱԷ-ն, Մերձավոր Արևելքի երկրները:

Կենսաբանական բազմազանություն

Ըստ որոշ գիտնականների, մենք գտնվում ենք Երկիր մոլորակի պատմության մեջ տեսակների զանգվածային թվով 6-րդ բնաջնջման գործընթացի մեջտեղում: Եթե չլուծենք կլիմայի խնդիրը, էկոհամակարգերի զգալի մասը այլևս չի համապատասխանի կենդանիներից շատերի կյանքի ձևավորված պայմաններին, քանի որ նրանց կենսամիջավայրը շատ արագ կփոխվի:

«Խմելու ջրի պակաս, սով և համաճարակներ

ՄԱԿ փորձագետները զգուշացնում են, որ տաքացումը բացասաբար կանդրադառնա բերքատվության վրա, հատկապես Աֆրիկայի, Ասիայի և Լատինական Ամերիկայի թույլ զարգացած երկրներում, ինչը պարենային խնդիրներ կառաջացնի: Ըստ գիտնականների, 2080-ին սովից տառապող մարդկանց թիվը կարող է ավելանալ 600 միլիոնով: Կլիմայական փոփոխությունների մեկ այլ կարևոր հետևանք կարող է դառնալ խմելու ջրի պակասը: Չորային կլիմայով՝ Կենտրոնական Ասիայի, Միջերկրածովյան, Հարավային Աֆրիկայի երկրներում, Ավստրալիայում իրավիճակը շատ ավելի կարող է վատթարանալ տեղումների նվազման պատճառով: Սովը, ջրի պակասն ու միջատների միգրացիան կարող են հանգեցնել համաճարակների աճի և հյուսիսային շրջաններում այնպիսի արևադարձային հիվանդությունների տարածմանը, ինչպիսիք են մալարիան և տենդը:

Կենցաղային գազի, ածուխի, յուղի եւ բենզինի վառելիքի այրումը մթնոլորտում բարձրացնում է ածխածնի երկօքսիդի մակարդակը և ածխածնի երկօքսիդը ջերմոցային ազդեցության և գլոբալ տաքացման հիմնական խթան է:

Մենք կարող ենք օգնել, որպեսզի նվազեցնենք հանածո վառելիքի պահանջարկը, որն էլ իջեցնում է գլոբալ տաքացումը՝ օգտագործելով էներգիան ավելի իմաստուն: Ահա 10 պարզ քայլեր, որոնք կարող եք ձեռնարկել, որպեսզի նվազեցնել գլոբալ տաքացումը:

Կատարեք ձեր մասը թափոնների կրճատման միջոցով, օգտագործելով միանգամյա օգտագործման այլընտրանքային արտադրանք: Նվազագույն փաթեթավորմամբ

ապրանքներ ձեռք բերելը (ներառյալ տնտեսության չափը, երբ դա նշանակում է ձեզ համար) կօգնի նվազեցնել թափոնները: Եվ երբ մենք կարողանանք, վերամշակենք թուղթը, պլաստմասսան , թերթը, ապակիները և այլումինե խողովակները: Եթե ձեր աշխատավայրում, դպրոցում կամ ձեր համայնքում չկա վերամշակման ծրագիր, հարցրեք մեկնարկի մասին: Կենցաղային թափոնների կեսը վերամշակելով, կարող եք տարեկան 2,400 ֆունտ ածխաթթու գազի խնայել:

Որքան էլ համաշխարհային փորձագետները մեթոդներ մշակեն ու փորձեն իրականացնել դրանք հանուն գլոբալ տաքացման դեմ պայքարի գործին , այնուամենայնիվ, ստորև ներկայացված է հինգ պարզ քայլեր, որոնք կախված են բացառապես Երկիր մոլորակի յուրաքանչյուր բնակչից.

1. Ընտրել ճիշտ տեղաշարժման միջոց, քանի որ քաղաքում տրանսպորտային միջոցների ընտրությունն էական ազդեցություն ունի գազերի արտանետումների մակարդակի վրա: Մենք կարող ենք հրաժարվել անձնական մեքենաներից և օգտվել հեծանիվներից, ինքնագնացներից:
2. Խնայել էլեկտրոէներգիան
3. Օգտագործել քիչ մսամթերք, քանի որ մսի արտադրությունը զգալիորեն ավելի շատ ջերմոցային գազերի արտանետումներ է առաջացնում, քան հավի, բանջարեղենի, մրգերի և հացահատիկների աճեցումը
4. Հեռացնել թափոնները, օգտագործել վերամշակվող նյութերը, նույնիսկ ջուրը
5. Տեղեկացնել ու կրթել , թե ինչպես ճիշտ օգտագործել մեր մոլորակի ռեսուրսները

Խմելու ջրի հիմնախնդիրները

Այսօր աշխարհում առկա էկոլոգիական հիմնախնդիրներից ամենաշատը երևի քաղցրահամ ջրի հիմնախնդիրն է: Ողջ աշխարհում քաղցրահամ ջրի պակաս է զգացվում գրեթե բոլոր

երկրներում: Բայց ոչ մի քայլ չի ձեռնարկվում ջրի պաշարները խնայելու համար: Ինչ է պետք անել և ինչ են անում... Համաշխարհային օվկիանոսի ջրի ընդամենը 2-2,5%-ն է խմելու համար պիտանի, իսկ այս տեմպերով օգտագործման դեպքում այն կբավականացնի մոտ 350-400 տարի: 1970-80-ական թվականներին այսպիսի միտք է արտահայտվել՝ որպես քաղցրահամ ջրի աղբյուր օգտագործել Գրենլանդիայի, Անտարկտիդայի եւ Հյուսիսային Սառուցյա լճակների սառցադաշտերը, որը բավականին դժվար իրագործելի խնդիր է: Սառցադաշտերը կազմում են մոտ 24 մլն կիլոմետր խորանարդ:

Աշխարհի ջրային ռեսուրսների էկոլոգիական վիճակի եւ օգտագործման ֆոնի վրա Հայաստանի համանուն պատկերը ահագնացող է: Մեր ընդհանուր ջրային մուտքը տեղումների միջոցով կազմում է մոտ 18 մլրդ խորանարդմետր, որից 10 մլրդ-ը գոլորշիանում է, 5 մլրդ-ը կազմում է մակերեսային հոսքը, մնացածը ներծծված ջրերն են, որոնք սնում են աղբյուրներն ու գետերը, լրացնում արտեզյան ավազանը:

Ջրային պաշարներից երկրի տարածքում առկա 1700 կայուն եւ ոչ կայուն հոսք ունեցող գետերի եւ գետակների ջրերը կազմում են տարեկան 7,5 մլրդ մետր խորանարդ, 115 մեծ և փոքր լճերի, ջրամբարների և արհեստական լճակների ջրերի գումարային ծավալը հասնում է 35 մլրդ մետր խորանարդ, որից 32 մլրդ-ը կուտակված է Սևանում: Ջրի մեծ պահեստարան է նաև Արարատյան դաշտի ընդերքի ավազանը, որտեղ պաշարը (Թուրքիայի մասի հետ միասին) կազմում է մոտ 27 մլրդ մետր խորանարդ (առանց գրունտային ջրերի): Հանրապետության մյուս շրջաններում եղած ստորերկրյա ջրերի գումարային ծավալը կազմում է 500 մլն մետր խորանարդ:

Այսպիսով, Հայաստանի տարածքում գոյություն ունեցող 70 մլրդ մետր խորանարդ ջուրը օգտագործման ներկա մակարդակով և տեխնոլոգիաներով «բավարարում» է ժողովրդի կենցաղի եւ արտադրության բոլոր պահանջները՝ միաժամանակ ապահովելով գետերի և ավազանների ինքնամաքումն ու էկոլոգիական վիճակը: Եւ եթե այս ջրերը օգտագործվեն խնայողաբար եւ նպատակային կերպով, ապա անհանգստություն չէր առաջանա այդ կենսական ռեսուրսի վերարտադրության նկատմամբ, եւ Հայաստանը այս տեսանկյունից կհամարվեր աշխարհի ամենաբարենպաստ վիճակում գտնվող երկրներից

մեկը: Հայաստանում ջրի միջին սպառումը պիտի լինի ամսեկան 7.230.000 խոր.մետր: Բայց օրական ամբողջ Հայաստանում սպառվում է 8.000.000 խոր.մետրից ավելի ջուր: Սա Հայաստանի օրինակն էր, որտեղ դեռևս քիչ է զգացվում ջրի կարիքը: Իսկ օրինակ Աֆրիկայի շատ երկրներ այդքան ջուր չեն կարողանում սպառել անգամ մեկ տարվա ընթացքում: Նրանք ուղղակի չունեն ջրի պաշարներ: Ինչ վերաբերվում է սրա համաշխարհայինացմանը...Մեր օրերում աշխարհում չկա այդպիսի երկիր, որ չունենա քաղցրահամ ջրի պաշարների քանակի նվազում: Կարծում եմ՝ լավ կլինի պարզապես օգտվել ջրի հատկություններից: Օրինակ՝ ինքնամաքրման: Երբ ջուրը բնության մեջ շրջապտույտ է կատարում, նաև ինքնամաքրվում է ու ինչ-որ աշխատանքներից հետո պիտանի կլինի նաև օգտագործման: Քչացնել ջրի միջոցով աշխատող էլեկտրակայանների կառուցումն ու շահագործումը: Էներգիա ստանալ ոչ թե միայն ջրի միջոցով, նաև այլ միջոցներով՝ արևից, քամուց, էներգակիրներից(չնայած դրանք էլ են սպառվող): Ինչևէ, եթե ամեն մարդ խնայի ջուրը ինչ-որ չափով, վերջում ամեն մեկի խնայած մի փոքր ջրի քանակությունը միացնելով իրար կստացվի ահռելի քանակություն, որն էլ կգումարվի քաղցրահամ ջրի պաշարներին ու պիտանի կլինի օգտագործման:

Անտառային ռեսուրսներ

Անտառները զբաղեցնում են երկրագնդի ցամաքային տարածքի մոտ 26 տոկոսը: Վերջին 200 տարվա ընթացքում փայտանյութի չափազանց մեծ ծավալներով մթերման հետևանքով երկրագնդի անտառների ընդհանուր տարածքը կրճատվել է առնվազն կրկնակի: Դրա գլխավոր պատճառը զանգվածային անտառահատումներն են: Անտառների զանգվածային ոչնչացումը կարող է հանգեցնել էկոլոգիական մեծ աղետի ամբողջ աշխարհում, այսինքն երկրագնդի բնական պայմանները կփոխվեն այն աստիճան, որ մարդկանց առողջության համար կդառնան վնասակար: Հաշվարկված է, որ անտառներ ապահովում են պարենով և վառելիքով, տրամադրում են ապաստան և ծառայում են որպես եկամտի աղբյուր 1,6 մլրդ մարդու: Անտառը ոչ միային աշխարհի աղքատ բնակչության զգալի մասի գոյատևման կարևոր աղբյուրն է, այլ նաև արժեքավոր ռեսուրս բոլոր մակարդակներում տնտեսական գործունեության համար;

Երկիր մոլորակի անտառները փրկելու համար պետք է հատուկ մասշտաբային միջոցառումներ իրականացնել անտառահատման դեմ, վերականգնել կանաչ գոտիները, առօրյա աշխատանքային կամ կենցաղային գործերում հնարավորինս քիչ թուղթ օգտագործել:



Տվյալների մշակում եւ վերլուծություն

Աշխարհագրությունը հանրակրթական առարկա է, որը սկսվում է ուսումնասիրվել միջնակարգ դպրոցում: Աշխարհագրությունը միակ առարկան է, որ տալիս է Երկրի՝ մարդկության մոլորակի և նրա վրա մարդկային հասարակության տարածքային կազմակերպման մասին անմիջական պատկերացում: Աշխարհագրությունը գտնվելով բնագիտական, տեխնիկական և հասարակագիտական գիտությունների շփման ոլորտում, սերտորեն կապված է դրանց հետ: Աշխարհագրությունը բոլոր երկրների դպրոցների առանցքային հանրակրթական առարկաներից է և պատասխանատու տեղ է գրավում ուսումնական ծրագրերում: Աշխարհագրությունը երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության գործում աշխարհայացքային և ընդհանուր մշակութային կարևոր դերակատարում ունենալուց բացի, կոչված է սովորողին հաղորդելու նաև կիրառական նշանակության գիտելիքներ ու հմտություններ.

1.Յուրահատուկ միջազգային լեզվի՝ աշխարհագրական քարտեզից օգտվելու, ինչպես նաև պարզունակ քարտեզ- սխեմայի կազման կարողություն

2.Բնական և հասարակական երևույթների մասին աղբյուրներից ստացվող տեղեկատվության ամբողջության ու համակարգման կարողություն

3.Տեղանքում կողմնորոշվելու, բնության մեջ դիտարկումներ և չափումներ կատարելու կարողություն

4.Ժողովրդագրական և տնտեսական վիճակագրական տվյալների հետ աշխատելու կարողություն

5.Աշխարհագրական տեղեկատվական համակարգերից օգտվելու կարողություն:

Աշխարհագրության ուսումնասիրման արդյունքում սովորողը պետք է իմանա աշխարհագրության առարկան օբյեկտները, դրանցից յուրաքանչյուրին բնորոշ օրինաչափությունները , աշխարհագրության հետազոտության մեթոդները, դրանց կիրառությունը աշխարհագրական տարբեր երևույթներ ու օբյեկտներ ուսումնասիրելիս: Սովորողը պետք է կարողանա բնական կամ հասարակական որևէ երևույթի օրինակով վեր հանել օրինաչափություններ, որոնք ընդհանուր են աշխարհագրության բոլոր ճյուղերի համար, ինչպես նաև կարողանա հետազոտել տեղագրական քարտեզով իր տեղանքում հանձնարարված երևույթի կամ օբյեկտի չափերը, որոշի զարգացման օրինաչափությունները: Առարկան ուսումնասիրելու արդյունքում սովորողների մոտ սկսվում է ձևավորվել աշխարհագրական մշակույթը և աշխարհագրական լեզվի իմացությունը: Աշխարհագրական գիտելիքները կարող են օգտագործվել առօրյա կյանքում: Գիտելիքների յուրացման արդյունքում կարևոր է գնահատել շրջակա միջավայրը, պահպանել և ռացիոնալ օգտագործել այն:

Կարևորում են աշխարհագրության դասընթացի կրթադաստիրակչական դերը: Ճանաչելով բնական ու հասարակական տարրերն ու երևույթները սովորողը հասկանում և գնահատում է սեփական հայրենիքի տեղն ու դերը աշխարհում:

Սովորողների մոտ ձևավորվում է հասարակական երևույթները վերլուծելու, պատճառահետևանքային կապերը բացահայտելու, տարբերակելու և գնահատելու կարողություններ և հմտություններ: Խորացնելով քարտեզագրական գիտելիքները սովորողը կարևորում է ազգային- պետական մտածողությունը, դառնում է ավելի ազգասեր ու հայրենասեր, գիտակցում է իր ժողովրդի նյութական ու հոգևոր արժեքների պահպանման, առավել զարգացման անհրաժեշտությունը:

Մենք ապրում ենք աշխարհում, որտեղ ռեսուրսները անհավասարաչափ են տեղաբաշխված, է՛լ ավելի անհավասարաչափ են շնորհվում և օգտագործվում տարբեր հասարակությունների կողմից: Որպեսզի դիմակայենք միջավայրի փլուզմանը, որում ապրում ենք, պետք է նպաստել այնպիսի աշխարհի զարգացմանը, որում բոլոր ժողովուրդները կապրեն ապահովված և խնայողաբար կվերաբերվեն բնությանը:

Եզրակացություն

Աշխարհագրությունը երկրի մասին հին գիտություններից մեկն է, որն անհատին օգնում է ամբողջական պատկերացում կազմելու մեր մոլորակի և նրա համակարգերի մասին: Աշխարհագրության ուսումնասիրումը հնարավորություն է տալիս հասկանալու մոլորակի վրա ազդող երևույթները՝ կլիմայի փոփոխություն, գլոբալ տաքացում, անապատեցում, ջրային ռեսուրսների խնդիրներ և այլն: Աշխարհագրության բազմաթիվ ճյուղեր գիտական շրջանառության մեջ են մտցնում նոր փաստերի, մեթոդների և տեսությունների էվերեստներ:

Աշխարհագրությունն ուսումնասիրողները կարող են լավ հասկանալ գլոբալ քաղաքական խնդիրները, որոնք առաջանում են երկրների միջև: Բոլոր առաջատար երկրներում աշխարհագրությունը ընդունվում է ոչ այլ կերպ քան պետականության ատրիբուտ, որպես պետականության հասունության և զարգացվածության անհրաժեշտ հատկանիշ:

Աշխարհագրությունը կամուրջներ է գցում երկրների միջև: Աշխարհագրության գլխավոր սոցիալական գործառույթը ժողովուրդների միջև փոխհամաձայնության հաստատումն է, միջազգային լարվածության թուլացումը, սպառազինությունների մրցավազքի դադարեցումը

- <https://www.ecolur.org/hy/news/cities/698/?fbclid=IwAR3RuxxTxz27j4bVHp0sFvaPbE2ZuPwDxYbUFHBz2JlgYgruNRJHO-MRfk4>
- https://www.bbc.com/russian/features-45795487?fbclid=IwAR1sWdr36cedqO5eOU4FVM_ve4w0UyGmgz2oqKbQSyeUGcCy8leiNKD4oFA